

Հավելված N 1

ՀԱՊԿ Նախագահի 25ը փետրվարի 2025թ

Թիվ 02-25/2 որոշման

Հաստատում էմ



Հ. Արրահամյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Անվասայլակով բասկետբոլի 2025 թվականի ՀՀ առաջնության

Երևան 2025թ

1. Մրցաշարի նպատակները և խնդիրները.

- մրցաշարի ուժեղագույն թիմերի որոշումը;
- Հայաստանի Հանրապետությունում անվասայլակով բասկետբոլի զարգացումը, ճանաչելիության բարձրացումը;
- մարզաձևի հեղինակության բարձրացումը;
- տաղանդավոր մարզիկների բացահայտումը;
- պարալիմպիկ մարզաձևի մասսայականացումը;
- հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացումը և հաշմանդամային սպորտի զարգացումը;
- անվասայլակով բասկետբոլի միջոցով մրցակցության ու փոխըմբռնման ոգու ապահովումը;
- արդար խաղի ապահովումը:

2. Առաջնության կազմակերպումը

Անվասայլակով բասկետբոլի ՀՀ 2025թ առաջնության կազմակերպիչը Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտեն է (այսուհետ՝ ՀԱՊԿ): Առաջնության կազմակերպումն իրականացվում է ՀԱՊԿ Անվասայլակով բասկետբոլ մարզաձևի հանձնաժողովը և առաջնության Կազմկոմիտեն: Մրցաշարի կազմակերպիչը և իրականացնողները պատասխանատու են մրցաշարի պատշաճ անցկացման համար:

3. Հաշվետվություններ

Առաջնության մարզական արդյունքների մասին արձանագրությունները Կազմկոմիտեի կողմից պետք է ներկայացվեն ՀԱՊԿ՝ մրցաշարի ավարտից անմիջապես հետո, իսկ հաշվետվությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Մասնակիցներ և հայտերը

Առաջնությանը կարող են մասնակցել Անվասայլակով բասկետբոլի ակումբները:

Առաջնությանը չեն կարող մասնակցել ՀՀ օրենսդրության, Միջազգային պարալիմպիկ կոմիտեի կանոնակարգերի կամ ՀԱՊԿ կանոնադրության համաձայն որակագրված այն մարզիկները (թիմերը), որոնց որակագրկման ժամկետը ուժի մեջ է առ առաջնության անցկացման վերջնաժամկետը:

Առաջնությանը մասնակցելու համար ակումբները, մինչև **2025 թվականի մարտի 15-ը, ժամը 23:00**, սահմանված ձևով լրացված մասնակցության հայտը պետք է ուղարկեն ՀԱՊԿ պաշտոնական arm.paralympic@gmail.com էլեկտրոնային փոստին կամ հանձնել ՀԱՊԿ գրասենյակ (ք. Երևան, Ծիծեռնակաբերդի 16 հասցե):

5. Առաջնության անցկացման կանոններ

ՀՀ անվասայլակով բասկետբոլի 2025թ. ազգային առաջնությանը անց է կացվելու միջազգային անվասայլակով բասկետբոլի ֆեդերացիայի գործող կանոնների համաձայն (7 համարի գնդակով):

- Առաջնությունը կանցկացվի մեկ շրջանով՝ բոլորը բոլորի հետ:
- Հաղթանակի համար տրվում է 2 միավոր, իսկ պարտության դեպքում՝ 1 միավոր, խաղին չներկայանալու կամ խաղից զրկվելու դեպքում՝ 0 միավոր, 0 : 20 հաշվով:
- Թիմերի միավորների հավասարության դեպքում առավելությունը տրվում է գնդակների լավագույն առավելություն ունեցող թիմին:
- Առաջնության ընթացքում յուրաքանչյուր մարզիկի թույլատրվում է մասնակցել մեկ թիմի (ակումբի) կազմում:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԽԱՆՏՈՒՄՆԵՐ

Մասնակից թիմերը պետք է ապահովված լինեն 2 տարբեր գույնի խաղային համազգեստով: Երկու թիմերի նույն գույնի համազգեստի դեպքում այն պարտավոր է փոխել խաղացանկում առաջինը նշված թիմը (խաղահրապարակի տերը), հակառակ դեպքում նրան կգրանցվի պարտություն 0:20 հաշվով:

Առանց հիմնավոր պատճառի խաղին չներկայանալու դեպքում ակումբին կգրանցվի պարտություն 0:20 հաշվով:

6. Առաջնության անցկացման ժամկետները

Առաջնությունը անց է կացվելու 2025 թվականի մարտի 29-ից 30-ը: Առաջնության մեկնարկի ժամ է սահմանվել 12:30-ը:

7. Առաջնության անցկացման վայրը

Առաջնությունը կանցկացվի Երևանի Մանանդյան 41 հասցեում գտնվող «Միկա» ՄՀԿ մարզադահլիճում:

8. Կացություն և սնունդ

Սահմանափակ թվով մասնակիցներ անվճար կապահովվեն սննդով և գիշերակացով (ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով և չափով):

9. Տրանսպորտ

Սահմանափակ թվով մասնակիցների համար անվճար կապահովվի տրանսպորտային ծառայություն:

10. Մասնակցության վճարներ

Առաջնության մասնակցության համար վճար սահմանված չէ:

11. Մրցանակներ և պարգևատրումներ

Առաջնության ընթացքում կխաղարկվի մեդալների 1 հավաքածու:

Խաղարկված մեդալները նվաճած թիմերի մարզիկները կստանան դրամական պարգևներ ՀՀ կառավարության սահմանած չափերով:

12. Ֆինանսավորումը

ՀՀ առաջնության ֆինանսավորումը իրականացվում է ՀՀ Պետական բյուջեի միջոցների հաշվին՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՀԱՊԿ-ի միջև կնքված դրամաշնորհային պայմանագրի, ինչպես նաև ՀԱՊԿ-ի միջոցներով: